«ՄԻՈՒԹՅՈՒՆ» ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԸ» (1860 թ.)

Մ. Ն. ՀԱԿՈԲՅԱՆ

Հայ դեմոկրատական մամուլի պատմության մեջ իր հատուկ տեղն ունի 1860 թ. Զմյուռնիայում հրատարակված «Միություն» կիսամսյա հանդեսը։ Այդ տեղը մինչև հիմա տարօրինակ կերպով անտեսվել է, իսկ հանդեսը պատշաճ ուշադրության չի արժանացել։ Մինչդեռ «Միության» պատմությունը շատ ու շատ կողմերով բնորոշ է այն պայքարին, որ հայ առաջադիմական-դեմոկրատական մամուլը տասնամյակներ շարունակ մղել է ոչ միայն իր գոյատևման իրավունքի, այլև հայ հասարակական մտքի առաջընթացի համար։ Հանդեսի դերն առավել մեծ է նրանով, որ այն Զմյուռնիայում հրատարակված առաջին դեմոկրատական պարբերականն էր և նրա փորձը, հետադիմության դեմ մղված պայքարում նրան վիճակված փորձությունները, առավել ևս նրա ձեռքբերումները որոշակի նպաստ բերեցին դեմոկրատական մամուլի, մասնավորապես Դր. Չիլինկիրյանի «Ծաղիկի» լինելությանը։

«Միությունը», ի տարբերություն այլ պարբերականների, ունի իր նախապատմությունը, որն առնչվում է Հաշտենից մշակութային ընկերության ստեղծման հետ։ Զմյուռնիայի հայտնի Մեսրոպյան վարժարանի մի խումբ սաներ 1859 թ. հուլիսի վերջերին հիմնեցին Հաշտենից ընկերությունը՝ նպատակ ունենալով նպաստել ազգի լուսավորությանը, հրատարակել ազգօգուտ գրքեր, նյութական միջոցներ հայթայթել ազգային դպրոցների համար, լույս ընծայել հատուկ պարբերական, արհեստանոց հիմնելով՝ ձրիաբար օգնել աղքատ ծնողների երեխաներին ձեռք բերելու արհեստավորի որոշ հմտություններ։ Ընկերության ղեկավարները՝ խորհրդական անդամներ, ինն առաջադեմ երիտասարդներ էին՝ Հ. Սավալանյանը (ատենադպիր), Գ. Տետեյանը, Հովհ. Մաքսուտոֆը, Հ. Տետեյանը, Ս. Պալապանյանը, Գ. Կոստանդյանը (գանձապետ), Ղ. Մարկոսոֆը (որը շուտով հրաժարվել է), Ղ. Մամուրյանը, Սարգիս Միրզա Վանանդեցին։ Ի սկզբանե նրանք որդեգրել են գործունեության դեմոկրատական սկզբունքը. ընկերությունը չպետք է ունենա միանձնյա ղեկավար՝ նախագահ, նրա աշխատանքը հավասարազոր իրավունքով գլխավորելու են խորհրդական հիշյալ ինն անդամները, իսկ պատվավոր անդամները չպետք է միջամտեն. ղեկավար կազմից ատենադպիրը և գանձապետը, որոնք հաշվետու էին յուրաքանչյուր եռամսյակ, փոխվելու էին տարեկան մեկ անգամ։

Առաջադիմության ընդհանուր ձգտումը, հասարակական կյանքում տեղի ունեցող աշխատությունն ու խմորումները, ինչպես նաև գաղթօջախի հետադեմների գործադրած բռնությունները, որոնք օբյեկտիվորեն խթանեցին զմյուռնահայության ընդհանուր արթնացմանը, նպաստեցին Հաշտենիցի սկզբնական շրջանի հաջողությանը։ Երկու շաբաթվա ընթացքում ընկերությանն անդամագրվեցին 200 բաժնով (5-ական ղուրուշ)։ Տարեվերջին ընկերությունն իր միջոցներից արդեն վճարում էր Մանիսա գյուղաքաղաքի դպրոցի հայկաբանության դասատուի կես աշխատավարձը, առաջարկեց հոգաբարձուներին՝ իր տնօրինությամբ Մեսրոպյանին կից հիմնել արհեստանոց՝ աղքատ երեխաների ուսուցման համար։

Սակայն Հաշտենիցի գործունեությունը հետագա ծավալում չստացավ։ Նրա ձեռնարկումներից ամենից նշանավորը եղավ «Միություն» հանդեսի հրատարակությունը։ Սպասվում էր, որ հանդեսը մեծ ընդունելություն կգտնի, քանի որ, ինչպես արտահայտվել է «Արշալույս արարատյան» թերթը, «մեր ազգը որմե ևս առավել պետք ունի ներկա ժամանակիս մեջ միավորվելու, միություն կազմելու կոչ անող պարբերականի։ Եվ իրոք, միայն Զմյուռնիայում նա ունեցավ շուրջ հարյուր բաժանորդ, որ մեծ թիվ է այն ժամանակի համար։ Ինչպես Հաշտենիցը չունեցավ նախագահ, այնպես էլ «Միությունը», որ կրում էր «Հանդես Հաշտենից» ենթաատողոսը, չունեցավ միանձնյա խմբագիր։ Այսօրվա տերմինով ասած, հանդեսը խմբագրում և հրատարակում էր խմբագրական կոլեգիան, որի կազմի մեջ էին մտնում ընկերության խորհրդական անդամները, հավանաբար Հ. Սավալանյանը, Գ. Կոստանդյանը, Սարգիս Միրզա Վանանդեցին և, թերևս, էլի մեկ-երկուսը։ Հանդեսում հրատարակվող նյութերը, համենայն դեպս խմբագրականները և կարևոր հոդվածները, նախապես քննարկվում էին խմբագրակից-

հրատարակիչների ժողովում։ Նրանցից որևէ մեկն անձնապես իրավունք չուներ տնօրինելու այդ նյութերի տպագրության հարցը։ Այդպիսի փորձը, ինչպես կտեսնենք, հղի էր լուրջ հետևանքներով։

Այդպիսով, «Միությունը» ոչ թե մի անհատ խմբագիր-հրատարակչի կարծիքի արտահայտիչն էր, ինչպես, օրինակ, «Արշալույս արարատյանը», այլ կոլեկտիվ մարմնի հայտարարը, ավելի ստույգ՝ զմյուռնահայ երիտասարդության օրգանը, այն երիտասարդության, որ համախմբվել էր Հաշտենիցի շուրջը և տոգորված էր դեմոկրատական սկզբունքներով, մտահոգված էր ժողովրդի վիճակով, բռնում էր դեմոկրատական գաղափարների ու մտահայեցության ուղեգիծ[1]։ Ըստ էության նորաստեղծ «Միությունը» արդեն քսան տարի հրատարակվող «Արշալույս արարատյանի» հակակշիռն էր։ Նրանց հրատարակիչ-խմբագիրների փոխհարաբերությունները, թեև սկզբնապես բարեկամական էին, շուտով ստացան թշնամական բնույթ՝ առիթ ունենալով «Միության» շուրջը տեղի ունեցած իրադարձությունները, ինչպես և նրանում լույս տեսած առանձին հոդվածներ։ Ըստ որում, «Արշալույս արարատյանի» խմբագիր Ղ. Պալդաղարյանը, տպարանատիրոջ և ավագության իրավունքով, հորդորում էր «Միության» անփորձ խմբագիրներին խոհեմ գիծ վարել, նույնիսկ փորձում էր միջամտել ներխմբագրական աշխատանքին, վիճարկում էր առանձին նյութերի տպագրության նպատակահարմարությունը, ինչպես խոստովանել է մի առիթով։

«Միության» առաջին համարը լույս է տեսել 1860 թ. հունվարի 1-ին, ութէջյա, խնամքով տպագրված, նյութերի դյուրամատչելի մատուցմամբ։ Դատելով նրա ծրագրային հոդվածից, որ ստորագրված է՝ «Խմբագրություն», հրատարակիչները նպատակ ունեին իրենց «մըտավոր երկունքը ու գրավոր վաստակը» նվիրաբերել ազգին, արծարծել «ուսմանց և կրթության սեր»՝ հետևելով եվրոպացիների «գեղեցիկ շավղացը»։

Հանդեսի համարների քննությունը և նրա բուն պատմությունը թելադրում են «Միության» գործունեությունը բաժանել երեք շրջափուլերի՝ առանց, սակայն, դրանք միմյանցից տարանջատելու։ Սկզբնական շրջանում՝ հունվարից սեպտեմբեր, երբ լույս տեսան «Միության» 1—17-րդ համարները, նրա խմբագրական մարմնում որոշիչ դեր էին կատարում Հայրապետ Սավալանյանը և Դալուստ Կոստանդյանը՝ Հաշտենիցի ատենադպիրը և դանձապետը։ Արդեն իրենց ինքնուրույն գործունեությամբ հայտնի այդ գործիչները, համագործակցելով Հաշտենիցի մյուս հիմնադիրների հետ, միաժամանակ հանդես են բերել ինքնուրույն դիմագիծ, հրատարակել են հոդվածներ, որոնք արծարծում են առանձին հրատապ հարցեր, երբեմն լրացնելով միմյանց։

Լավագույնս ծանոթ լինելով Երուսաղեմի հայոց մատենադարանին, Հ. Սավալանյանը հանդես եկավ ժողովրդի ձեռագիր ժառանգությանը նվիրված հոդվածով՝ «Հայկական գրատանց վրայոր համառոտ տեսություն»[2]։ Արմատական հարց է հարուցում հեղինակը. գրապատոցները պետք է ծառայեն ժողովրդին, նրանց դռները պետք է բացվեն ուսումնասիրողների ու հետաքրքրվողների առջև։ Ձեռագիր մատյանները, որոնք ժողովուրդը դարեր շարունակ պաշտել ու պահպանել է, ժառանգել հաջորդ սերունդներին, չեն կարող դառնալ առանձին միաբանությունների կամ անձանց սեփականությունը, դրանք «բոլոր ազգայնոց պիտոյիցը և ընթերցման համար» են։ Մինչդեռ ձեռագրերը Երուսաղեմում, Մխիթարյան միաբանությունների մատենադարաններում, Սիսում և էջմիածնում պարփակված են «խորագույն խորշի և անլույս դարանի մը մեջ», անմատչելի են, անփութաբար են պահպանվում։ «Ազգային ստացվածքը» ժողովրդի սեփականությունը դարձնելու համար Սավալանյանն առաջարկում է աստիճանաբար լույս ընծայել ձեռագրերը, պատրաստել «ներհուն բանագետ և աշխատասեր» մշակներ, որոնք կարողանան ապահովել արժեքավոր մատյանների պատշաճ հրատարակությունը։ Նա մի այլ անգամ հատուկ անդրադառնում է Երուսաղեմի վանքի մատենադարանի արժեքավոր ձեռագրերին, նկարագրում է մի շարք մատյաններ[3]։

---

1 Ընկերության միջոցով Արագածունյաց պարբերական հրատարակելու առաջին փորձը Զմյուռնիայի հայ մտավորականները կատարել են դեռևս 1843-ին՝ լույս ընծայելով «Հայրենասեր» թերթը։

2 «Միություն». 1860, № 1, էջ 2—4. № 2, էջ 9—11 (այսուհետև կնշենք միայն էջերը՝ տեքստում, փակագծերի մեջ)։

3 Հ. Սավալանյանը (1821—1901) Երուսաղեմի միաբանությունում 1847—1858 թթ. և 1864—1872 թթ. վարել է մի շարք պաշտոններ. մասնավորապես եղել է մատենադարանի ու

Գաշտպանելով Սավալանյանի հարցադրումները, հանդեսի X 12-ում Գ. Կոստանդյանը տպագրեց «Եղելություն մը» հոդվածը (էջ 89—90), որտեղ հատկապես անդրադարձավ Մշո հանրահայտ Ճառընտիր մատյանի հետ տեղի ունեցածին՝ ժողովրդի դարավոր նշխարքներն անվթար պահպանելու և «ազգին ընծայելուց» խոր մտահոգությամբ։ Գ. Կոստանդյանը «Միություն»-ում հանդես էր գալիս նրա առաջին համարից, ինչպես թարգմանություններով, այնպես էլ ինքնուրույն հոդվածներով ու դիտական բնույթի տեղեկատու նյութերով, որոնց տակ ստորագրում էր «Ռոց» ծածկանունով։ Սկզբունքային նշանակություն ունի նրա «Միություն։ Միաբանություն» հոդվածը (էջ 26—28)։ Դա ազգային համախմբվածություն հաստատելու Հաշտենիցի և նրա օրգանի ծրագրային հավատամքն է։ Քննելով հայոց պատմական ճակատագիրը և հայ ժողովրդի ցանուցիր լինելու պատճառները, որոնց նա մեղսակից է համարում նաև սառառականությանը, որ «հայրենիք չունի», Կոստանդյանն ազգի գոյությունը պայմանավորում է ազգային միասնությամբ։ «Ըստ մեզ,— գրում է նա,— քանի որ միություն չկա և միաբանություն կպակսի, անկարելի բան է ազգություն շարունակել և հայրենասիրությամբ ծաղկիլ։ Ինավ մխիթարիչ չէ այս ու այնտեղ հաստատված հայ դանգվածների լուսավորված լինելը, մանավանդ որ «Հայաստանը մերկ է և կործանված, յուր զավակները օտարացած և ցրված՝ միշտ կորսվելու ենթակա»։ Գ. Կոստանդյանը դատապարտում է նրանց, ովքեր՝ «բաղդը այսպես է» ասելով, անտարբեր ենթարկվում են ճակատագրին։ Նա կոչ է անում ցուցարկել «ջանք ու խոհեմություն», ապա և մատնանշում հայ ժողովրդի հինգդարյա վերքերի բուժման միջոցը, որ հանգում է «ՄԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ» հաստատելուն։

Ապագա ընդհատ փիլիսոփայի այս դեղատոմսը, որ թելադրված էր իրադրության պահանջներով, առաջին անգամ չէ, որ առաջարկվում էր մամուլի էջերից։ Բայց դրանով նա չի ամարտում իր խոսքը։ «Անուշ Հայաստանի» ճակատագրով մտահոգված հրապարակախոսը, մեծ գերապատվություն տալով աշխարհագրական միջավայրին, ցավով նկատում է, որ նրա լուսավորության նկատմամբ տածվող հույսերն իրականացնելու հեռանկար չկա և հայացքն ուղղում է մի այլ կողմ։ «Այսու պատճառավ,— գրում է Կոստանդյանը,— պետք եմք ընտրել այնպիսի երկիր մը, ուր թե հայրենիք եղած բլլա և թե ընդարձակ ծովեղր մը ունենա։ Այսպիսի երկիր մը կրնամք կա ըսել, ցուցնելով ԿԻԼԻԿԻԱՆ»։

Միտումն ակնհայտ է, բացահայտ՝ Կիլիկիան դարձնել հայոց նոր հայրենիքը։ Եվ այդ մասին հոդակվում է Զեյթունի դյուցազնական ապստամբությունից ոչ շատ առաջ՝ 1860 թ. փետրվարին։ Ազգային-ազատագրության իմաստով այդ գաղափարը, թեև ոչ իրական հեռանկարով, կոնկրետ բայլերի դիմելու և գործունեություն ծավալելու կոչ էր պարունակում իր մեջ։ Միայն Գ. Կոստանդյանի ու նրա շրջապատի, նույնիսկ Զմյուռնիայում տեղի ունեցող խմորումների արդյունքը չէր դա։ Կիլիկիան Փոքր Հայաստան դարձնելու գաղափարը հարազատ էր ազգային ազատագրությամբ մտահոգված շրջաններին։

«Միություն և միաբանություն» կոչը երկրորդ կրկնելուց հետո, Գ. Կոստանդյանը նորից դիմելով ընթերցողներին, շեշտում է. «Անցածը զացած է և եղածը լմնցած. փոխանակ անցելուն վրա ափսոսալու՝ նոր հառաջադիմություն մը դտնելու ջանանք, ջանանք միշտ»։ Հարկ է, որ ամենքը հոանգուն գործունեություն ծավալեն, նաև կրոնական վերնախավը և աղնվականությունը «ջանան թող հայրենասիրությամբ»։ Եվ այդ բոլորի վերագույն նպատակը, ինչպես սահմանում է Կոստանդյանը, պետք է լինի լուսավորություն տարածելն ու հաստատելը։ Ազատագրության ուղղակի կոչ նա չի անում այս հոդվածում, բայց ենթատեքստում հենց ազատագրության գաղափարն է, որ նա բացահայտ ձևով արտահայտել չէր կարող։

տպարանի տնօրենը և 1866—1867 թթ.՝ միաբանության «Սիոն» հանդեսի խմբագիրը։ Երկարատև աշխատությամբ նա նկարագրել է 1742 ձեռագիր, ինչպես և գրել է «Պատմություն Երուսաղեմի» երկհատոր աշխատությունը, որ հրատարակվել է 1931 թ., պատրաստել, ծանոթագրել և լույս է ընծայել ձեռագիր մի քանի ժամանակագրություններ, ինչպես և մեկ-երկու ինքնուրույն գրքույկներ։

4 Հատկանշական է, որ անդրադառնալով «Միության» առաջին համարներին, Ֆրանսիայի մայրաքաղաքում լույս տեսնող «Փարիզ» թերթի խմբագիր Ա. Մուրատյանը ուշադրությունը բևեռում է Գ. Կոստանդյանի հոդվածին և հրավիրում «բոլոր հայոց կարդալ և միտ դնել» («Փարիզ», 8 հունիսի 1869)։

Միայն այս անգամ չէ, որ ազատասիրական իր զաղափարները Կոստանդյանն արտահայտում է քողարկված ձևով, այլաբանորեն։ Շուտով՝ 1861 թ. մայիսին, նա պիտի հրատարակի «Առ հայս. Տեսիլք» այլաբանությունը, ուր կակնարկի նաև «Մարդկային հեղափոխությանց Ոգու» մասին, ապա պիտի դրան վերադառնա «Ծաղիկում», որի էջերում, արդեն մի այլ առիթով, կգրի. «Հայ ազատականները կգովեմ ու զանոնք կսիրեմ, ու ես ալ իրենց բանակեն ըլլալով՝ կուզեմ որ արատ մը, կեղտ մը անգամ վրանին չի գա... Քաջ համոզված ենք թե քսաներորդ դարուն Արամյան տոհմին ջահը արդի հայ երիտասարդությունը պիտի ըլլա... Իրավունքը ժամանակեն, ընտանեն ու շղթաներեն չհաղթվիր...»[5]։

Մի այլ հարցադրումով ևս Գ. Կոստանդյանն արձագանքում էր հայ հասարակական մտորումներին։ Նա առաջ քաշեց «եվրոպական լեզվավ լոկ ազգային օրագիր մը ունենալու» հարցը։ Ինչպես Հ. Սրվանձյանը, Գ. Կոստանդյանը նույնպես ցանկանում էր, որ Եվրոպան իմանա «մեր արդի վիճակը», որ այդպիսի պարբերականի միջոցով իրական գաղափար տրվի հայ ժողովրդի մասին[6]։ Եվրոպական որևէ լեզվով հայ մամուլն, իրոք, արդեն անհրաժեշտություն էր։

«Միության» էջերում Գ. Կոստանդյանը (Գ. Կ.) առաջ է քաշել մի այլ կարևոր հարց ևս։ «Հայ ազատախոսությունը» խորագրով հոդվածում (էջ 33—34) նա երևան է հանում իր քաղաքացիական դիմագիծը, որ էական նշանակություն ունի ապագա բնագետ փիլիսոփայի «Մեթոդի վրա» երկի հեղինակի վաղ շրջանի գրեթե անտեսված գործունեության բնութագրության համար։ Կոստանդյանը գտնում է, որ գոյություն ունեցող տարաձայնությունը կամ «կամքի անմիաբանությունը բնականաբար կգոյանա», շեշտում է բանավիճելու, քննադատելու անհրաժեշտությունը։ Դա է ժողովրդին կրթելու, «խրատելու», ինչպես և սնապարծությունն ու եսականությունը վերացնելու միջոցը։ Ի տարբերություն նախորդ տարիների, երբ տիրում էր «մեծերուն տգեղ իշխանությունը», «ազատախոս և օրինավոր քննադատությունը» մուտք է գործում հայ իրականություն։ Արդեն անհրաժեշտ է սյարզել, թե «ինչպիսի կանոններով» պետք է քննադատել, որովհետև զանազան «հիշոցները» խանգարում են ազգասերներին հայտնելու իրենց գաղափարները, արգելակում են «ազատաքննությունը»։ Պատասխանելով այն հարցին, թե ինչ քննադատության կողմնակից է և որն է ազատախոսության իր ըմբռնումը[7], Գ. Կոստանդյանը գրում էր. «Սույն նյութիս վրա երկարելով կրնամք նաև մեր կողմանե խորին հարգանք և շնորհակալություն մատուցանել Հ. Գ. Սրվանձյան ազգասեր հարգելվոյն, որ գրեթե առաջին անգամ քալեց ազատախոս քննադատությամբ հայոց մեջ, և այսպիսի ազգասիրական ջանից փոխարեն՝ քննադատված անկանոնությանց, մոլությանց ու տգիտությանց վերանալը պիտի ըլլա տակավ առ տակավ» (էջ 34)։

Այսպիսով, Գ. Կոստանդյանը լիովին համերաշխվում է Հ. Սրվանձյանի ու նրա «Մեղուի» հետ, պատշաճն է հատուցում նրանց ուղեգծին, նաև բարձր է դնահատում մամուլի դերը ժողովրդի կյանքում. «Ազգային օրագիրները ժողովրդյան թե աչքն են և թե լեզուն... Մեզ նման սփոյալ ժողովուրդը ի՞նչ կըլլա արդյոք, եթե քննադատության մտիկ չըներ և օրինավորին և լավագույնին դեմ կկենա գոռոզանալով»։ Այստեղից էլ «Միության» հիմնական խնդիրներից մեկը «չկասիլ օրինավոր քննադատություններ և վիճաբանություններ ընելե, քաջ գիտենալով, որ չափաղանց օգտավետ կաղդուրիչ մ'է նաև ներկա հայությանս»։

«Միության» այս խմբագրակիցները, մասնավորապես Դ. Մամուրյանը և Սարգիս Միրզա Վանանդեցին, նույնպես ակտիվ դերում էին։ Եթե Մամուրյանը գլխավորապես քննում էր դաստիարակության ու կրթության հարցերը և հատուկ ուշադրություն էր նվիրում ակջիկների ուսուցմանն ու դասատուների դերի բարձրացմանը, ապա Վանանդեցին շեշտում է թատրոնի նշանակությունը՝ իբրև «ազգի մը դպրոցի», «ապագա բարելավությանց նպաստող «գործոնի» (էջ 11—12)։ Նրանք, ինչպես և Ս. Պալապանյանը (Ա. Ս. Յ. Պ.), որ արծարծում էր ազգային դաստիարակության ու լեզվի հարցերը, ընդհուպ մոտենում էին կոնկրետ քննադատություն ծավալելու խնդրին՝ գիտակցելով ու ընդգծելով, որ «մեր թշնամին մեր մեջը ունինք» (էջ 67)։ «Ժողովուրդը,— շեշտել է իր մի հոդվածում Վանանդեցին,— կույր թողուլ, կրոնամոլ խիստ

---

5 «Ծաղիկ». 20 նոյեմբերի 1861, էջ 114, 115։

6 Հմմտ. «Միություն», 15 փետրվարի 1860, էջ 28 և «Մեղու», 30 ապրիլի 1860 (Հ. Սրվանձյան. Հրապարակախոսություն. Երևան 1960, էջ 119)։

7 Հետագայում Գ. Կոստանդյանը վերադարձավ այդ հարցին և նույնիսկ որոշակի դրույթներ՝ բանավիճելու քաղաքավարական կանոններ առաջարկեց («Ծաղիկ», 20 նոյեմբերի 1861, էջ 114—115)։

գավազանով զանիկա ճնշելը ստուգիվ թե՛ խղճի և թե՛ մարդկության դեմ է. ամեն ազգ և ամեն անհատ յուր մասնավոր իրավունքն ունի և զանիկա սուրբ և անկողոպուտ պահելը նվիրական պարտք մ'է իրեն համար» (էջ 67)։

Սակայն «Միության» դավանած սկզբունքներն ավելի ցայտուն դրսևորում են գտել նրանում դետեղված անստորագիր, այսօրվա տերմինով ասած՝ խմբագրական հոդվածներում։ Մասնավոր մի խնդրի շուրջը հանդես գալով, «Միությունը» «Ազգային արդի խնդիր» (էջ 73—74) հոդվածում պաշտպանում է Սրվանձյան—մեղվական ուղեգիծը կրոնադավանաբանական այն պայքարում, որ բորբոքվել էր Մուշում։

Ավելի լայն է «Միության» տնտադաշտը, երբ քննում է գաղթօջախի վարժարանների վիճակը և ուսումնադաստիարակչական գործի դրվածքը։ «Ազգային վարժարանք Զմյուռնիոյ» և «Մեսրոպյան վարժարան» խմբագրականներում (էջ 105—108, 139—140) ետ է տարվում այն գաղափարը, որ տարիներ շարունակ հասարակության հայացքից ծածկում էր Մեսրոպյան և Հռիփսիմյան վարժարանների իրական վիճակը։ Բարձրացվող հարցերն արմատական նշանակություն ունեն՝ վարժարանները կարոտ են «հիմնական և կատարյալ բարեկարգության». պետք է ընդլայնել նրանց ներքին տեսչի «լիազոր իշխանությունը», որով կասմանափակվի հոգաբարձուների ինքնիշխանությունը դպրոցների նկատմամբ. «ամեն ազգային անհատ» և հասարակությունն իրավունք ունեն և հնարավորություն պետք է ստանան հետաքրքրվելու վարժարանի կյանքով. վարժարանները չունեն մշտական կանոններ, նրանց դասատուները փոփոխվում են վերակացուների քմահաճույքով։ «Ազգը,— գրում է «Միությունը»,— միջամուխ լինելու իրավունքը յուր ձեռքով կկորցնե անոնց լիակատար իշխանություն տալով, դպրոցը՝ ոչ հարուստ, այլ հմուտ և տեղյակ վերակացության պետք ունի, և ամեն ուսումնական ազգայնոց սրբազան պարտք մ'է մտածել յուր ազգային հառաջադիմությանը, և կշռել այն անձը, որո ձեռք դպրոցական լիակատար իրավունքը կհանձնվի» (էջ 139)։ Ըստ հանդեսի՝ հարկ էր «ուսումնական ընկերություն մի կազմել», որն իր ձեռքը վերցներ վարժարանները։

Դեմոկրատական սկզբունքների վրա հենվելով, «Միությունն», այդպիսով, առաջ էր քաշում կրթական գործը հասարակական հսկողության տակ դնելու հարցը և այդ ասպարեզից մեծահարուստներին դուրս մղելու խնդիրը։ Եվ դա մի այնպիսի ժամանակ էր արվում, երբ վարժարանները մնացել էին առանց տեսչի, կարող դասատուները հրաժարվում էին, զգալի թվով աշակերտներ ուսում ստանալու համար Եվրոպա էին մեկնում։

«Միության» առաջին շրջափուլի կարևոր նշանաձողերից մեկն է Մ. Մամուրյանի աշխատակցությունը։ Հանդեսի 12 համարներում լույս է տեսել «Անդղիական նամականիի» առաջին մասը (№ 3 և հետո)։ Նրա հրատարակությունն արևմտահայ կյանքում, կարելի է ասել, ուներ այն նշանակությունը, որ ունեցավ Մ. Նալբանդյանի «Հիշատակարանի» տպագրությունը արևելահայ ընթերցողների համար։ «Միությունն» անգնահատելի ծառայություն է մատուցել հայ հասարակական մտքին ու հրապարակախոսությանը, սկզբնավորելով Մամուրյանի՝ փիլիսոփայական-տնտեսական լուրջ գաղափաներ առաջադրող և հրատապ հարցեր քննող երկի հրատարակությունը։ Դրանով հանդեսը միաժամանակ դրսևորում էր հրապարակախոսական իր կողմնորոշումը։

Արմատական բնույթ ունեն «Միության» ելույթներն Ազգային սահմանադրության շուրջը, սահմանադրություն, որ փաստորեն դարձել էր հանդեսի գոյության ու գործունեության իրավական և բարոյական հիմքը։ Եվ հատկանշական է, որ նա առաջին անգամ սահմանադրությանն անդրադարձել է հենց Մ. Մամուրյանի հոդվածով՝ «Ազգային սահմանադրություն» (էջ 97—102)։ Դա արևմտահայ երիտասարդության դիրքորոշումն է ոչ միայն սահմանադրության հարցում, այլև առհասարակ արևմտահայ կյանքում՝ 1860-ական թթ. սկզբին։ Սահմանադրությունը կարևոր հաղթանակ է «խառն ի խուռն» վիճակի, տիրող անիշխանության և «մեծամեծաց բռնության» նկատմամբ։ Բայց այն ինքնին օրենք և ուժ չէ, կդառնա «թղթի կտոր մի», եթե ժողովուրդը շունչ և իշխանություն չտա, չհսկի նրա կենսագործմանը։ «Ազգը արթուն պահելու» անհրաժեշտությունից ելնելով, Մամուրյանը «Միության» էջերում առաջ է քաշում «ժողովրդյան մեջ ազգասիրական կուսակցություն մը» հիմնելու խնդիրը՝ նրա «առաջադեմ, ողջախոհ և ընտիր մասեն բաղկացյալ», և որը «տիրապետե ամենուն վրա»։

Այսպիսին էր ընդհանուր առմամբ «Միություն» հանդեսն իր առաջին շրջափուլում։ Նրա երկրորդ շրջափուլը սկսվում է 17-րդ համարից, ավելի ճշգրիտ՝ նախորդ համարում սկսված և հետագա երկու համարներում շարունակված, բայց և անավարտ մնացած ոչ այնքան էլ բարդ այլապատումով։

Խոսքը «Մարդկային կենցաղ» պատումի մասին է։ Ըստ էության դա արտացոլում է հանդեսի գաղափարական ցատկը և նշանավորում նրա լիակատար անցումը դեմոկրատիայի կողմը։ Դժբախտաբար անհայտ են մնում պատումի Ա և Բ հատվածները[8], ինչպես և նրա երրորդ մասը, որը թերևս չի գրվել։ Բայց նրա երկրորդ մասը լիովին գաղափար է տալիս ամբողջ պատումի բնույթի մասին (էջ 133—135, 140—142), որը հավանաբար հրատարակվում էր անստորագիր։

Համառոտակի ծանոթանանք այդ պատումին։ Պատկառազդու ծերունին, Մասիսից մի հսկա սառցակտոր առած, «աղավնո նման» սուրալով հյուսիսից ընթանում է դեպի «Արևմուտք», որպեսզի հարված հասցնի «Արևելքե Արևմուտք երկարած դիակին». «Այնպիսի դիակ մ'էր, որ Փյունիկ հավուն նման մեռած ժամանակը իսկ կրնար կենդանություն առնուլ և յուր կերպարանքը Արևմուտքե Հյուսիս դարձնել այս անգամ»։ Սարսափելով դրանից, ծերունին ուզում է մասիսյան սառցաղանգվածով ճնշել, անհետ անել դիակը՝ այնպես, որ «բնավ յուր կերպարանքը չերևի մարդկության առջև»։ Հանկարծ հայտնվում է «գեղաժպիտ երիտասարդ մի... կերպարանքն աներկյուղ էր և անվեհեր»։ Եվ նա սաստում է ծերունուն. «Մի անպատվեր այն դիակը, որո կենդանութենե դողայիր անձայն և լռիկ... Ինչ կուզես այս դիակեն, ասավ, ինչու զայն նախատես հանիրավի»։ Տեղի ունեցած երկխոսությունից պարզվում է, որ ծերունին զայրացած վրեժխնդիր է ուզում լինել այն բանի համար, որ դիակը կենդանի եղած ժամանակ նրան «շատ նախատեց»։ Այն ժամանակ նա չէր համարձակվում, քանի որ «զորավոր էր... Ահա, կըսե, դիակին վրա նայելով, շատ աշխատություն դրեցի բու պաշտպաններուդ թիվը պակսեցնելու և շատ տեղ ալ հաջողեցա իսկ, բայց ափսոս որ տակավին դքեզ պաշտպանողներ գտնվին»։

Անողոք հարցումներով «գեղաժպիտ երիտասարդը» դատափետում է ծերունուն. «Այս դարը բողոքող դար մ' է ծերունի, ամեն համազգի լավ զգացած է, որ լռությունը շատ անդամ և գրեթե միշտ ազգային պակասությանց սնունդ տվավ, անարգ և անխիղճ գործերու ընդարձակ ասպարեզ մի բացավ, ազգային արյունը և եռանդը մարեց... բավական է ալ որչափ որ ընդհանուրը մասնավորին զոհ եղավ...»։

Երիտասարդի հարցապնդումներից շփոթահար և «փախուստի ճամբա» չգտնելով, ծերունին դիակի վրա է նետում սառցակտորը և անհայտանում «դեպի հյուսիս»։ Դրանից առաջ աներևութացել էր նաև ազատախոս և անվեհեր երիտասարդը։ Պատումի հեղինակը մնում է դիակի առջև. «Մեծ հետաքրքրությամբ ծերունվոյն երթալեն վերջը դիակին մոտեցա և տեսա, որ արևուն ճառագայթները սաստ հալեցուցած՝ մահվան ջերմությունը դիակին վրայի անհետացնեին և իբրև վերստին կենդանություն տային անոր։ Եվ երբ գուշակեի, որ դիակը զորություն և ույժ պիտի զգենուր և յուր կերպարանքը Արևմուտքե Հյուսիս պիտի դարձներ, երևակայությունը հափշտակեր զիս նույն տեղեն և ուրիշ տեսարանի մի առաջնորդե...»։

Այլաբանության մեջ մի քանի տեղ ևս կիսատ տողերը լրացնում են կախման կետերը, որոնք փոխարինում են այն ամենին, ինչ պատումի հեղինակը չէր կարող գրել։ Բայց այն, ինչ նկարագրված է, պարզ ու հասկանալի էր լավատեղյակ ընթերցողներին։ Խոսքը Այվազովսկու (ծերունու) «լուռ» պայքարի և Ս. Ոսկանյանի («դիակի», քանի որ նրա «Արևմուտքն» արդեն չէր հրատարակվում) մղած պայքարի մասին է։ Հանձին ազատախոս երիտասարդի թերևս ներկայացվում է Մ. Նալբանդյանը։

Առհասարակ այլաբանությունը շատ մեկնաբանությունների է տեղիք տալիս։ Բայց մեզ տվյալ դեպքում հետաքրքրում է «Միությանն» դիրքորոշումը Այվազովսկու նկատմամբ, նրա համերաշխությունը Ոսկանյանի հետ, փափագը, որ դեմոկրատական դիրքերից «Արևմուտքի» մղած պայքարի ոգին վերակենդանանա, նրա հավանական ակնարկը Մ. Նալբանդյանի մասին, համերաշխությունը վերջինիս հետ, որի կերպարը փարատում է «Ծերունի»-ներին դիմակայող երիտասարդությանը երբեմն համակող սարսափը և պայքարի ուժ հաղորդում։

Պատումի մեզ հայտնի «ուրիշ տեսարանը» Զմյուռնիան է, Մեսրոպյան վարժարանը. այս հատվածն ավարտվում է նշանակալի կոչով. «Հայրենասեր սիրտ մի բնավ պետք չէ ընկճի, երբ շունչ ունի, երբ կենդանի է...»։ Պնդել դժվար է, բայց գուցե հեղինակը Գ. Կոստանդյանն է, որին հարազատ էր այլաբանությունը և որը կիսատ է թողել պատումը, թեև նրա վերջում նշված էր, թե «պիտի շարունակվի»։

---

8 Հայրենական գրապահոցներում պահվող «Միությանն» հավաքածուներում, ցավոք, չըկան հանդեսի 15-րդ և 16-րդ համարները։

«Միության» մի հոդվածը ևս, այսպես ասած, անցումային է՝ տպագրվել է առաջինից երկրորդ շրջափուլին անցնելու ընթացքում, դարձյալ անստորագիր է և ունի ծրագրային բնույթ։ Նրա՝ «Ազգասեր մարդ չկա» խորագիրն արդեն իսկ բնորոշող է։ Այդ հոդվածով (էջ 131—133, 147—148, 163—166) դմյուռնահայ դեմոկրատ երիտասարդությունը իրական գրոհ էր ձեռնարկում ընդդեմ այն ամենի, ինչ խանգարում էր իր գործունեությանը։

Հակառակ վերնագրի կտրուկ պնդմանը, հոդվածում ցույց է տրվում, որ ամենուր ազգասեր մարդիկ կան։ Ազգասեր է նաև «յուր բեղմնավոր միտքը ու վառվռուն երևակայությունը» ազգին նվիրող այն խմբագիրը (իմա՝ Ս. Ոսկանյանը), որը «ամեն վիճակի հետ կռվեցավ ի սեր ազգության», բայց «վերջապես իմացավ, թե ինչ մեծ հանցանք է ժամանակե առաջ իրավունք ունենալ, ուստի Աւեւլէն հետո զոհեց Աւեմուտէն ալ...»։ Պարզելով իր տեսությունը, հոդվածի հեղինակը, ի տարբերություն Գ. Կոստանդյանի, նաև ի հակադրություն Ս. Ոսկանյանի, գտնում է, որ վաճառականությունն է «ազգային միության կեդրոնը... Անոր վրա է բովանդակ ազգի մը հույսը», քանի որ ազգի ապագա փրկությունը թերևս դանձով պետք է կատարվի։

Սկզբունական ուղեգծից կատարվող այս շեղումը ցույց է տալիս, որ խմբագրակից երիտասարդները[9] բոլոր հարցերում չէ, որ համակարծիք էին։ Անկախ դրանից, «Ազգասեր մարդ չկա» հոդվածը մեծ կրքոտությամբ արծարծում է ազգասիրության խնդիրը, հայոց լեզվի հարցը, դատապարտում է ֆրանսամոլությունը, դատակնիք է դրոշմում նրանց դեմքին, ովքեր «շրթնամբը սիրեն զազգը», ուզում են ազգը ենթարկել «իւեսց բացարձակ կամացը», փորձում են դ.ադեսի ձեռքից խլել նրա միակ զենքը՝ գրիչը, որպեսզի «իրենց նողկալի գործքերը չհրապարակվին»։ Մեծ համոզումով նա պաշտպանում է մամուլի իրավունքները, խոսքի ազատությունը։ Մի ընդարձակ հատված նվիրելով «Խորհրդարան ազգային» իրականացական ժողովարանում տեղի ունեցող ատենախոսություններին, նա ազատախոս «ծերունու» և «արդարասեր» ատենախոսի լեզվով ձաղկում է իշխանավորներին, որոնք իրենց դիրքերն անսասան պահելու համար բռնությամբ ու մատնությամբ խափանում են պարբերականները։

Ինչպես նշվում է հոդվածի հրատարակված վերջին հատվածի եզրափակման մեջ, նրա շարունակությունը ուղղված էր լինելու «ծերունի լրագրապետի մը», այսինքն «Արշալույս արարատյանի» խմբագիր Ղ. Պալտազարյանի դեմ։ Բայց հոդվածի շարունակությունը չի հրատարակվել։ Այս հոդվածի ծավալը թույլ չի տալիս քննելու Զմյուռնիայի երկու պարբերականների հարաբերակցությունը, ինչպես և հարակից մի շարք հարցեր։ Միայն նկատենք, որ «Ազգասեր մարդ չկա» հոդվածում թույլ է տրվել կոպիտ վրիպակ։ Ֆրանսամոլներից պաշտպանելով հայոց լեզվի պատիվը հոդվածագիրն իրեն թույլ է տվել ֆրանսերենը համարելու բարբառական (էջ 133)։ Թեև հաջորդ համարում իսկ հանդեսն ուղղել է վրիպումը՝ բանը հանգեցնելով տպագրական վրիպակի (պետք է լիներ՝ բարբառամաղ), «Արշալույս արարատյանը» առիկ հասավ հեց «յուր բոլոր զորությամբը բողոքել»[10]։ Խնդիրը հասավ Զմյուռնիայի ֆրանսիական հյուպատոսին, որ սպառնաց «Միության» հրատարակիչներին, բայց հարցը լուծվեց հյուպատոսության հայ թարգմանչի կրկնակի ելույթով հանդեսի էջերում, որով էլ կոնֆլիկտը կարծես թե լուծվեց։

Հենց այդ ժամանակ էլ տեղի ունեցավ Հաշտենից ընկերության ղեկավար մարմնի և «Միության» խմբագրական կազմի պառակտումը։ Հրաժարական տվեցին Գ. Կոստանդյանը, Հով. Մակսուտոֆը, Կարապետ և Հարություն Տետեյանները և Ս. Պալապանյանը։ Թեև նրանց փոխարեն շուտով ընտրվեցին նորերը, Հաշտենիցի համար նրանց հրաժարումը լուրջ կորուստ էր, իսկ «Միությունը» զրկվում էր իր կարող մի խմբագրից՝ Գ. Կոստանդյանից[11]։ (Ի դեպ,

---

[9] Մի այլ աղբյուրից հայտնի է դառնում, որ «Ազգասեր մարդ չկա» հոդվածի հեղինակը, իր իսկ վկայությամբ, Հ. Սավալանյանն է։ Ոչ միայն այս դեպքում, այլև մի շարք այլ հարցերում նա համամիտ չէր մի դեպքում Գ. Կոստանդյանի, մի այլ դեպքում՝ Ղ. Մամուրյանի ու Սարգիս Միրզա Վանանդեցու, թերևս նաև այլոց հետ։ Անշուշտ, շատ բան կպարզվեր, եթե ամբողջապես հրապարակվեր Սավալանյանի թողած ինքնակենսագրական «Հուշերը»։

[10] «Արշալույս արարատյան», 1 հոկտեմբերի 1862։

[11] Հետագայում հանդես գալով «Ծաղիկի» էջերում, Գ. Կոստանդյանը բացատրել է, որ ինքը սխալ է թույլ տվել միանձնյա կերպով արգելելով այլոց հավանությանն արժանացած և դավանաբանական փոքրիկ մի հարցի նվիրված հոդվածի տպագրությունը, և նորից բարեկամական իր ձեռքն է պարզել Հաշտենից ընկերությանը։ Մյուս հրաժարվողները որևէ բացատրությամբ հանդես չեկան։

կարճ ժամանակով խմբագրությունից հրաժարվեցին նաև Հ. Սավալանյանը և Ս. Մ. Վանանդեցին, որոնք ինքնակամություն թույլ տալով, նոր վեճի առիթ էին տվել)։ Պառակտումը տեղի է ունեցել մեծ երկունքով, երկարատև ժողովներում հարցերը քննարկելուց հետո և առիթ է տվել հակառակորդների չափազանցված ու տևական մեկնություններին, մանավանդ «Արշալույս արարատյանում»։

Այդ պառակտումով, սակայն, «Միության» դիմագիծը լուրջ փոփոխության չի ենթարկվել. տարաձայնությունները վերաբերում էին առանձին, գրեթե մասնավոր հարցերի և ավելի շատ բխում էին տարբեր խառնվածքներից ծնվող հակակրանքից. որ երիտասարդ գործիչներն ի վիճակի չեղան հաղթահարելու։

Երկրորդ շրջափուլում հրատարակվել է «Միության» վեց համար (№ 18—23)։ Դրանց ընդհանուր հայտարարը սկզբունքային հարցերում համարժեք է նախորդ համարների բովանդակությանը։ Հանդեսը շարունակեց ընթանալ դեմոկրատական նախկին ուղիով, առանձին հարցերում նույնիսկ ավելի մեծ վճռականություն ու մարտունակություն ցուցաբերեց։

«Միությունը» շարունակեց հրատարակել Մ. Մամուրյանի «Անգղիական նամականին» և «Ադգասեր մարդ չկա» ու «Մարդկային կենցաղ» հոդվածների հաջորդ հատվածները, լույս ընծայեց սկզբունքային հարցեր առաջադրող մի շարք նյութեր՝ «Մեսրոպյան վարժարան» (էջ 139—140), «Ազգային սահմանադրություն» (էջ 155), «Ազատախոսության դեղեցիկ օրինակներ» (էջ 171—174), «1860 թվական» (էջ 179—181) և այլն։ Նա ավելի հաստատապես ծառացավ նրանց դեմ, ովքեր «ազգային իրավունքը և օգուտը, ազատությունը և խաղաղությունը ծծեր, հյուծեր և փճացրեր» էին։

Մարտական դիրքերից է «Միությունը» մերկացրել իշխող դասի փորձերը՝ խափանել խոսքի ազատությունը. «Եվ միթե հասարակ անձ մը, ինչ աստիճանի կուզե ըլլա, իրավունք չունի՞ աշմարտություն մը երևան հանելու, արդարություն մը խոսելու, անաչառ դատողություն մը արձանագրելու, ո՞ր ազգային օրենքը, ո՞ր սահմանադրությունը և ո՞ր բարոյականությունը կզրկե զինքը ազգին իրավանց մասնակցութենեն։ Ազգի մը հառաջադիմությունը անպիտան մարդոց հարստութենե՞ն կախում ունի, թե անհարուստ գիտնաց պիտանութենեն» (էջ 171—172)։ Եվ ապա «Միության» խմբագրականը նույն հավատով շարունակում է. «Ով մեծատունք, ով ազգային գլուխ, մի կարծեք, մի խաբվիք, իրավունքը բռնության ոտքին տակը չճմլվիր բնավ, քիչ մը ժամանակ կիյնի, որ հետո փառավորապես կանգնի ու հաղթանակի... Շատ ժամանակ չէ, երբ հասարակության բերան եղած կդատապարտեիր այն վարմունքները, այն ապօրինավոր ընթացքը, այն գաղափարները, որոնք հիմա հոգվո չափ կպաշտպանեք։ Այսչափ ատա սնափառությունը և պաշտոնները մարդս կմոլորեցնեն, ճշմարիտ ազգասիրության տեղ՝ սուտ ազգասիրությունը կփոխանակե և նույն կեղծ վարագույրին ներքև ազգին օգուտ ընելու ձևացմունքով յուր աստվածը (ղորովայնն) կպաշտե»։ Այսպիսի կտրուկ հարցադրումներով «Միությունը», սակայն, չէր այրում բոլոր կամուրջները։ Նրա հոդվածագիրը նաև հնարավոր է համարում, թե հակառակորդները «վերջապես պիտի համոզվին և երկու կողմի գաղափարները միանալով՝ անոնց զուգավորութենեն գեղեցիկ արդյունքներ պիտի ծնանին հօգուտ հասարակության» (էջ 172)։ Սակայն շուտով էլ հանդեսը շոշափելիորեն պիտի զգա, որ ապարդյուն հույսեր էին դրանք. ենթադրվող կոմպրոմիսն անիրականալի էր։

Նույն վճռականությամբ էր «Միությունը» շարունակում պաշտպանել ազատախոս մամուլը և նրա իրավունքները, նրա բուն կոչումը՝ «թմրյալ և թմբրյալ մտքերը արթնցնել... Եթե ոչ ի՞նչ է օրագիր մը և ինչ է օրագրի մը օգուտը» (էջ 150)։ Նա մերժում է «վատության զզվելի օրինակ» տվող և «մեկ քանի հարուստ տգետներու կրից գործիք» դարձող գրիչները, և, ընդհակառակը, փառաբանում է «ծրտյալ մտքով» պարուրված հարուստներին ձաղկող «ազատ ու համարձակ գրիչները և գլուխները», «անաչառ և համարձակախոս օրագիրներին»։ «Միությունը» հրատապ է համարում «երիտասարդ մտաց մեջ (որովհետև ծերութենե ալ հույսերնիս չմնաց) հիմակաց սկսիլ ազատասիրության սերմը ցանելը» և գերադասելի՝ «մարդկային հանճարը և գիտությունը, քան թե հարստությունը, որ գործիք եղած է բռնության» (էջ 184)։

«Միության» էջերում կայուն և հետևողական դիրքերից էին հանդես գալիս Հաշտենիցի նորընտիր անդամը՝ Ս. Ղոնճայանը, ինչպես և երկշաբաթաթերթին նոր-նոր աշխատակցող Ս. Թ. Ջելիքյանը։ Տգիտության ու հետադիմության որոգայթները մերկացնելով, նրանք լայն ու համարձակ գործունեության կոչ էին անում երիտասարդությանը։ «Ազգը,— զրել է իր ա-

նավարտ հոդվածում Ս. Ղոնճայանը՝ խոսքն ուղղելով երիտասարդ սերնդին,— ձեզմե յուր կենդանության հույսերը պիտի կարենա գտնել, ցանացեք առչի կառավարիչներուն պատճառած մահառիթ վերքերուն սպեղանիներ գտնել և ազգը խնամելով դարմանել... Հայրենասիրությունը ու ազգասիրությունը գորապետք, ազատախոսությունը դրոշակակիր և եվրոպացվոց շավիղը պատերազմի դաշտ ընտրեք... և մեր հաղթության փառավոր պսակը շահելու պիտի արժանանամք» (էջ 181)։ Ի դեպ, եվրոպայի օրինակը մատնացույց անելով, «Միությունը» նրա հետ առնասարակ որևէ քաղաքական հույս չէր կապում, նույնիսկ շեշտում էր, որ ազգի «լուսավորությունը Եվրոպայեն չսպասեք, ինչպես շատերը կերազեն, և ոչ արևելքեն, այլ մեր սրտեն է։ մեր կամքեն։ Լուսավորությունը այն ժամանակ պիտի ծագի հայոց մեջ, երբ որ... ազգային կապով իրարու հետ կապվինք» (էջ 183)։

1860 թ. դեկտեմբերի 1-ին լույս տեսավ «Միության» 23-րդ համարը, որ վերջինը եղավ, իսկ դեկտեմբերի 17-ին «Արշալույս արարատյանը» հայտնեց, թե «տեղական կառավարությունը պարտավորվեցավ գոցել տալու Տետեյան եղբարց տպագրատունը... Նմանապես Միություն անուն կիսամսյա հանդեսը առանց հրամանագրի հրատարակվելուն համար արգելվեցավ»։ Հայ մամուլում, մասնավորապես «Մեղուս» և «Փարիզ», ինչպես և «Մասիս» պարբերականներում ժամանակին հրատարակված նյութերն օգնում են պարզելու, թե ինչ է կատարվել հանդեսի հետ։ Իսկ տեղի ունեցածը գրեթե եղեռնագործություն էր հայ մտավոր ջանքերի նկատմամբ։

Հանդեսի քննադատությունից դժգոհ հակառակորդները, նրա նյութերում իրենց հասցված անպատվություն տեսնելով, հասել են այն բանին, որ գաղթաջախի ազգային ժողովը «քննելով» բողոքները, որոշում է, որ նրա խմբագիրները «հանդիմանության արժանի են տեղական կառավարության առջև»։ Առիթը մեծ չէր, բայց հետադիմության համար այդ էլ բավական էր։ Կանոն շառնելով մատնության առաջ, մեծատուններից ոմանք հուշեցին գավառապետ Օսման փաշային, որ արդելի հանդեսի տպագրությունը, քանի որ այն իբրև թե լույս ընծայելու պատշաճ հրամանագիր չունի։ Փաշայի (մի այլ տեղեկությամբ՝ նրա տեղակալի) հրամանով էլ խափանվել է թե՛ «Միությունը» և թե՛ Տետեյանների տպարանը, որը, սակայն, շուտով վերսկսել է գործել։

Հարցը դրանով չի սպառվել։ Խմբագիրները, ինչպես գրել է «Արշալույս արարատյանը», իրենց «գժբաղդ կացությունեն պահանջված պարկեշտության մեջ» շմնացին, այլ խոսքով դիմակայեցին թուրքական փաշային։ Դրությունն ավելի բարդացավ նրանով, որ մեծատուններից մեկի տան դռանը փակցվել էր անարգող թերթիկ, որը ևս ներկայացվել էր գավառապետին։ Դրան հետևել է անողոք հրամանը՝ բանտարկել «Միության» խմբագիրներին։ Դեկտեմբերի 3-ին թուրքական զավազները հենց պատարագի ժամին մուտք են գործել Ս. Ստեփանոս տաճարը և ցուցակը ներկայացնելով, հոգևոր առաջնորդից պահանջել են իրենց հանձնել խմբագիրներին։ Առաջնորդը խուսանավեց։ Որոնելով «Միության» խմբագիրներին, զավազները դիմեցին խուզարկության և նրանց հաջողվեց ձերբակալել ու բանտ նետել խմբագիրներից երևրին։

Բռնապետները և նրանց ձայնակցող «Արշալույս արարատյանը» տեղի ունեցածը ներկայացնում էին այնպես, թե կառավարության պատիժն արժանացել է Զմյուռնիայի հասարակության հավանությանը։ Բայց այլ բան է վկայում հետագա դեպքերի ականատեսներից ու մասնակիցներից մեկը. «Զմյուռնացի հայերը,— գրում է նա,— երբեք չէին ուզեր Միություն պատժված տեսնել այլ պսակված, ինչպես և խմբագրաց բանտարկված գիշերը ամեն տան ժողով կըլլար, եռապետները կպարսավվեին փողոցներուն մեջ, նաև առաջնորդարանը խուսն բազմություն ժողովելով՝ ամենքս ալ կղայրանայինք եռապետաց դեմ և կսպառնայինք, որ Միության խմբագիրները, այն պատվավոր հայրենասեր և գիտնական անձերը, որոնք նապետաց (բնավ և ոչ ազգին) բռնության կրից զոհ եղած էին՝ նույն գիշերը բանտեն հանվին։ Սրտերուն ցավը և մորմոքը մինչև անգամ ս. Առաջնորդը զրկելու կգրգռեր զիրենք... Խուռն և անթիվ բազմություն ժողոված էինք բանտին բոլորտիքը, կքաջալերեինք զիրենք և կգովեինք, որ ազգին համար կբանտարկվին. առաջնորդարանին բազմության մեկ մասը (ազդեցություն ունեցող անձինք) մինչև Համիտ պեյին բնակարանը կերթային Միության խմբագիրները աղատելու բանտեն... Քաղաքացվոց կողմեն բազմաթիվ պատվավոր ստորագրություններով շնորհակալության նամակ մը զրկվեցավ արդարասեր անձի մը, որուն իրավունքը պաշտպանելու

նետվեցավ դյուցազնաբար... Իզմիրի հայ հասարակությունը մեծ սեր և համարում ունի Միությունն հանդեսին վրա»[12]։

Այս նամակի հեղինակը, որ հանդես է գալիս «Հայրենասեր զմյուռնացի հայ մը» ստորագրությամբ, ի դեպ, նշում է, որ պատրաստ է և շուտով կհրատարակվի հատուկ գրքույկ, որտեղ արտացոլված են «բոլոր դեպքերը»՝ հականե-հանվանե։ Որքան հաջողվեց պարզել, այդպիսի գիրք չի հրատարակվել. հավանաբար եռապետները կանխել են նրա տպագրությունը կամ հրատարակիչներն են հրաժարվել այն լույս ընծայել։

Ո՛չ թուրքական իշխանությունները և ո՛չ էլ դաղթօջախի բռնապետ-մատնիչները, անշուշտ, չէին սպասում, որ իրադարձություններն այդպիսի բուռն ընթացք կստանան։ Առաջին անգամ ժողովուրդը ոտքի էր կանգնում և իր հզոր պաշտպանության տակ առնում հայ պարբերականը և նրա խմբագիրներին։ Փաստորեն կրկնվում էր այն նախերգանքը, որ մի քանի ամիս առաջ՝ օգոստոսի 1-ին, հանգեցրել էր Կ. Պոլսի ժողովրդական հզոր ցույցին։ Եվ դեպքերը թերևս հենց նույն հունով կընթանային, եթե բռնապետները չշտապեին հանդես գալ խմբագիրներին աղատելու միջնորդի դերում և եթե թուրքական իշխանությունները փոքր-ինչ հապաղեին։ Մի գիշեր բանտարկվելուց հետո առավոտյան նրանք ազատվեցին, ինչպես պահանջում էր բողոքող ժողովուրդը։ Շուտով իր գործունեությունը վերսկսեց Տետեյան եղբայրների տպարանը, իսկ «Միության» խմբագիրները ձեռնամուխ եղան հանդեսի հրատարակությունը վերսկսելու իրավունք ձեռք բերելուն։

«Միություն» դեմոկրատական հանդեսի այս պատմության մեջ կա նշանակալից մի էջ ևս, որ չափազանց խոսուն և հատկանշող է։ Հանդեսի պաշտպանության խնդիրը ոտքի է հանել Զմյուռնիայի հայ առաջադիմական երիտասարդությանը, հայ առաջադիմական-դեմոկրատական պարբերականներին, հատկապես Հ. Սրվաճյանին։ Երիտասարդ հրապարակագիրները, մանավանդ եռաստղանիշ ծածկագրերով նամակներ հրատարակող հեղինակը, կրակոտ հոդվածներ հղեցին Կ. Պոլսում և Փարիզում լույս տեսնող պարբերականներին, արտահայտեցին այն ցասումը, որ համակել էր զմյուռնահայերին, որոնք «կարծես թե կրակ առեր կրոնկիներ։ «Մեղուն», «Փարիզը», երբեմն նաև «Մասիսը» լայն տեղ հատկացրին Զմյուռնիայում տեղի ունեցած իրադարձություններին, դատակնիք դրոշմեցին բռնապետության դեմքին, դատապարտեցին «Վերջալույս արարատյանի» և Ղ. Պալտաղարյանի դիրքը։ Այդ նյութերին մենք կանդրադառնանք մի այլ առիթով, բայց այստեղ հարկ է խոսել Հ. Սրվաճյանի սկզբունքային կարևոր նշանակություն ունեցող ելույթներից մեկի մասին։

Իրադարձություններին ուշի-ուշով հետևելուց հետո, 1861 թ. հունվարին Հ. Սրվաճյանը հանդես եկավ «Միությունն և զմյուռնացի հայերը»[13] նշանավոր հոդվածով։ Դա «Մեղուի» ամփոփող և գնահատող խոսքն է՝ դրված հրապարակախոսական կրքով ու սրտացավությամբ։ Հինգ ենթագլուխների տակ՝ «Պատգամավորություն», «Մատնություն», «Միությանն հանցանքը», «Ճանաչեցնք զմեզ» և «Ճանաչեցինք զձեզ», Սրվաճյանը մեկտեղել է «Մեղուի» նախորդ ելույթները, իր կուտակած փաստերն ու անմիջական տպավորությունները և ցասումնալի խոսքով դատապարտել Հաշտենիցի հանդեսի դեմ խաչակրաց արշավանք մղող մեծամեծերին և, կարելի է ասել, դափնեպսակ է հյուսել խափանված «Միությանը»։

Գնահատելով «Միության» հավիվ մեկամյա գործունեությունը և պատասխանելով բոլոր գույների նրա հակառակորդներին, Հ. Սրվաճյանը գրել է. «Թող համոզվին, թե Միության խափանումը շատ ծանր և շատ սուղ պիտի ըլլա իրենց։ Վասնզի Միությունը եթե չշարունակվի՝ դարձյալ իր պաշտոնը կատարած է. նա պիտի արթնացներ ժողովուրդը ու իր իրավանց ճանաչմանը բերեր. ժողովուրդը արթնցավ·ու ալ ասկե ետև անկարելի է դարձյալ զանի թմրեցնել։ Ժողովուրդը արթնացավ և գոհ է իր արթնանալու վրա՝ իր կորսուած իրավունքներուն վայելմանն համար, հարցուց կինքը արթնցնող ձայնին հեղձվելուն պատճառը, իմացավ բուն պատճառը և վրեժխնդիր պիտի կանգնի Միության քաղցր ձայնին մարելուն»։ Դեռ ոչ մի ուրիշ հանդեսի մասին Սրվաճյանը այդքան ջերմորեն չէր արտահայտվել և չէր պաշտպանել այդպիսի մեծ կրքոտությամբ, ինչպես նա գնահատել ու պաշտպանել է «Միությունը»։ Բայց նա դեռ ասելիք ուներ։

---

12 «Մեղու», 20 մարտի 1861, էջ 75։

13 «Մեղու», 20 և 31 հունվարի 1861, էջ 9—11, 17—18 և Հ. Սրվաճյան, Նշվ. աշխ., էջ 156—163։

Դեռ այն ժամանակ, երբ Հաշտենից ընկերության և «Միության» ղեկավար կազմում համերաշխություն էր իշխում, Զմյուռնիայի հայ «ուսումնական և ուսումնասեր» մի խումբ երիտասարդներ հիմնեցին Վասպուրական ընկերությունը՝ նպատակ ունենալով զարթօջախում զարկ տալ թատերական գործին։ Այդ խմբի հիմնական կազմը Հաշտենից ընկերության «հոգվո չափ հայրենասեր և անձնվեր» անդամներն էին՝ Կ. Տետեյանը (Հավյան), Պ. Շահումյանը, Ա. Ղոնճայանը, Սարգիս Միրզա Վանանդեցին և ուրիշներ։ Նրանց հաջողվեց ոչ միայն թատրոնի «տախտակաշեն գեղեցիկ» շենք կառուցել, այլև շուտով կազմակերպել նաև հայերեն ներկայացումներ։ Հայկական թատրոնի հիմնումը դարձավ նշանավոր իրադարձություն ոչ միայն գաղթօջախի, այլ նաև արևմտահայ մշակութային կյանքում։ 1862—1864 թատերաշրջաններում Վասպուրական թատրոնը վերածվեց և՛ թատերական, և՛ հասարակական գործունեության բուռն կենտրոնի։ Թատրոնը հայտնի չափով լրացրեց այն բացը, որ գոյացել էր «Միության» խափանմամբ, նա դաստիարակական-հասարակական մտքի զարգացման իմաստով հանդեսի շարունակությունն էր, նույնիսկ նրա ծնունդն ու ժառանգորդը։

Հենց դրանով է պայմանավորված Հ. Սրվանձյանի արտակարգ խանդավառությունը, որ դրսևորվել է Վասպուրական ընկերության սկզբնաքայլերին և Հաշտենից ընկերության ու «Միության» գործունեության կրկին գնահատությանը նվիրված հոդվածում։ Ահա Սրվանձյանի անվերապահ խոսքը. «Փառք ու պարծանք Հաշտենից և Վասպուրական ընկերությունները կազմող ազգասեր և ուսումնասեր երիտասարդներուն... Միությունը թմրած հոգիներու անտարբերությունը վանելով և աչքը բանալով եղույց անոնց իրենց վիճակը... ինքզինքը զոհելով իր տեղը ազգայնության միությունը հաստատեց... էհ, Միությունը այսօր իր գերեզմանեն հեշտ աչերով և ուրախ սրտով կտեսնե իր մոխիրեն ամենուն սրտին մեջ ցանված, որոնք միշտ իրար բարշելով ամեն սիրտ կմիացնեն։ Հաշտենից ընկերության Միությունը, ոչ ոք կուրանա, իր դժկամ մահվամբը, նմանեցավ այն ցորենի հատին, որ եթե չընկնի ու չմեռնի արդյունավոր չըլլար։ Հաշտենից ընկերությունը հրատարակեց Միությունը սա հուսով, որ գեթ գյուղացիներն կհորդորե անոր։ Միությունը սպաննողները մեծ ծառայություն մ՚ բրին Հաշտենից ընկերության, վասնզի ազգասեր անմեղին տարաժամ մահը միշտ արդյունավոր եղած է և մահացողն միշտ իր նպատակին հասուցած։

Հաշտենից ընկերությունը իր վարձքը պիտի ընդունի թե՛ անմահ կենաց մեջ և թե՛ ազգային հիշատակության մեջ։ Հաշտենից ընկերությունը բեղմնավոր ամպ մը եղավ Զմյուռնիո վրա, որ եկավ ու ահա արկանելով երկչոտ մարդոց՝ արդասավորեց հայոց անդաստանը։ Բայց բավական չհամարեց իր այս պաշտոնը. նա ուզեց Հայաստանի երկնքի վրա հանապազ փայլող աստղ մ՚ ըլլալ, ուստի ուրիշ անունով, Վասպուրական ընկերության անունով հավաքվեցան դրեթե նույնիսկ Հաշտենից ընկերությունը կազմող ազգասեր երիտասարդները... Ճըշմարիտ կրսենք, եթե քանի մը տարի առաջ հրատարակվեր Միությունը, եթե քանի մը տարի առաջ բացվեր Վասպուրական թատրոնը, անցածներս չպիտի զգայինք այն ցավը, որ եռապետ անունով բամբասված անձերուն անվայել գործերը ազդեցին մեզի... զոնե հուսանք, որ այսուհետև եռապետ չորապետ չպիտի կրնան ամբողջ քաղաքի մը հայ ժողովուրդին իրավունքն ոտքի տակ առնել...»[14]։

Հաշտենից և Վասպուրական ընկերությունների, հայտնի չափով նաև «Միություն» խափանված հանդեսի դեմոկրատական դիրքորոշման լրացուցիչ դրսևորումը եղավ նրանց ղեկավար կազմի հանդիպումը Հնդկաստան կատարած ուղևորությունից վերադարձող Մ. Նալբանդյանի հետ, Զմյուռնիայում, 1861 թ. նոյեմբերի 18-ին, ինչպես և Նալբանդյանի բարձր գնահատականը և պարտավորեցնող բարեմաղթությունը Վասպուրական ընկերությանը։

Վերջապես նկատենք նաև հետևյալը։ «Միությունը» հող է նախապատրաստել արևմտահայ դեմոկրատիայի դիմյուռնական օրգանի՝ «Ծաղիկի» հրապարակ դալու համար, և այս դեպքում ևս իրականանում էին Հ. Սրվանձյանի վերոհիշյալ խոսքերը։ «Միության» խափանումից մոտ վեց ամիս հետո հրապարակ եկած Դր. Չիլինկիրյանի «Ծաղիկը», ըստ էության, «Միության» շարունակությունն էր, նրա հաջորդը, ինչպես ասվում էր այն օրերին Զմյուռնիայում։ Չհամաձայնելով իր հանդեսի և «Միության» միջև վատաբանելու նպատակով արվող զուգակշիռի հետ, Չիլինկիրյանը դիմել է բառախաղի և հստակորոշ պատասխան տալով, «Ծաղիկի» առաջին համարներից մեկում, գրել է. «Ծաղիկը՝ Միության հաջորդը չէ, այլ անոր քույրն է, երկուքն էլ իրենց կյանքը մեկ մայրե առած են, որ է հառաջադիմություն, ուստի

---

[14] «Մեղու», 20 հունիսի 1861, էջ 147 և Հ. Սրվանձյան, նշվ. աշխ., էջ 163—165։

Մաղիկը պաշտպան է իր քրոջ այն ամեն սկզբունքներուն, որոնց հիմն է ազատություն, իրավունք և պարտավորություն»[15]։ Ըստ այդմ «Մաղիկը» համոզված էր, որ «Միության» խմբագիրները շուտով «մի առ մի իրենց իրավունքը և պատիվը պիտի պաշտպանեն», գտնում էր, որ «վաղամեռիկ» հանդեսն «իր տեսակի մեջ Իզմիրի համար անդրանիկ և ազգօգուտ» էր, պակասությունների հետ միասին ուներ «շատ ալ կատարելություններ»։

Եվ իրոք, «Միության» խմբագիրներին հաջողվեց ձեռք բերել հանդեսի հրատարակությունը վերսկսելու թույլտվություն։ 1861 թ. սեպտեմբերից սկսվեց Հաշտենիցի հանդեսի տպագրությունը՝ համեստ անվանումով՝ «Միություն սահմանադրական», որը գոյատևեց մինչև 1862 թ. օգոստոսը, եթե չենք սխալվում, լույս տեսնելով մինչև 24-րդ համարը։ Այդ նոր տարեշրջանը մենք համարում ենք «Միության» երրորդ շրջափուլը՝ նոր անվանումով. իսկ նրա խմբագրությունը նախ տնօրինում էին Հ. Սավալանյանը և Սարգիս Միրզա Վանանդեցին, ապա [illegible]։ Ցավոք, հայրենական գրապահոցներում մեզ չհաջողվեց գտնել «Միություն սահմանադրականի» հավաքածուն, ուստի և դժվար է նրա մասին գաղափար տալ[16]։ Մամուլում, մանավորապես «Մաղիկում» հրատարակված բանավիճական մեծ թվով նյութերը, միակողմանի լինելով, չեն պատասխանում հիմնական հարցին՝ ինչ գաղափարներ է դավանել «Միություն սահմանադրականը»։

Ամփոփելով «Միություն» հանդեսի քննությունը, պետք է արձանագրել, որ Հաշտենից ընկերության պարբերականը եղել է դեմոկրատական օրգան և զգալի նպաստ է բերել հայ առաջադիմական-դեմոկրատական մտքի զարգացմանը։

ЗАПАДНОАРМЯНСКИЙ ДЕМОКРАТИЧЕСКИЙ ЖУРНАЛ «МИУТЮН» (1860 г.)

М. Н. АКОПЯН

(Резюме)

Передовые выпускники школы имени Маштоца г. Измира в середине 1859 г. организовали культурное общество «Аштениц» с целью содействовать просвещению армянского народа. Они же коллективными усилиями в 1860 г. издавали двухнедельный журнал «Миутюн» («Союз»). Исследование журнала, до сих пор не привлекавшего к себе внимания, показывает, что он отстаивал демократические принципы, поднимал на своих страницах злободневные вопросы, защищал права народа, боролся против богатеев и власть имущих. Журнал подвергался гонениям, затем был запрещен, его редакторы-издатели были брошены за решетку. Деятельность журнала и его роль высоко оценил революционер-демократ А. Свачян.

15 «Մաղիկ», 1 օգոստոսի 1861, էջ 25։

16 Որոշակի տեղեկություններից դատելով, Մխիթարյանների գրապահոցներում բարեբախտաբար պահպանվել են «Միություն սահմանադրականի» համարները։ Վերջերս մենք Բեյրութի Հայկազյան կոլեջի մատենադարանի տնօրեն Ժիրայր Դանիելյանի սիրահոժար հոգատարությամբ ստացանք «Միության» 15-րդ և 16-րդ համարների, ինչպես և «Միություն սահմանադրականի» 1861—1862 թթ. համարների լուսատիպ պատճեններ, որի համար խորապես շնորհակալ ենք։